ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, (0222)-62860 djraber@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 4

ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագանու թիվ 2-րդ արտահերթ նիստի օրակարգը

Ջրաբեր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 29-ի N31-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՍՈՒՐՄԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար **ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
33, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, (0222)-62860 djraber@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N 5-Ն

ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014Թ-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է

Ջրաբեր համայնքի ավագանու 2014թ-ի դեկտեմբերի 29-ի «Ջրաբեր համայնքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N31-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԱՉԻԿ
2. ՍԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՍԱՆՈՒԿՅԱՆ ՈՍՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ **ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ
Ջրաբեր համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 29-ի N 31-Ն որոշման
Փոփոխություն 2015թ. մարտի 3-ի N 5-Ն որոշմամբ

Ջրաբեր համայնքի տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և
վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների / ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության / տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1/մինչև 300քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական/ ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500դրամ.

2/ սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

3/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000դրամ.

4/501-ից մինչև 1000քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000դրամ.

5/ 1001 ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000դրամ.

6/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000դրամ.

Ոչ հիմնական շինությունների համար՝

7/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500դրամ.

8/20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների/ այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 2500դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1/ ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ.

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1 /բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հողուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ.

3/ խանութներում. կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ.
4/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 3000դրամ.
Ոչ հիմնական շինությունների ներսում հանրայի սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000դրամ.
6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ.
7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1/ առևտրի օբյեկտների համար՝ 50000դրամ.
2/հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝100000դրամ.
3/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ.
4/խաղատների կազմակերպման համար՝500000դրամ.
5/շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000դրամ.
6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000դրամ.
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000դրամ.
2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500դրամ.
3/ այլ արտաքին գովազդի համար՝ 1500դրամ.
4/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700դրամ.
9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրանադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000դրամ.
10.Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000դրամ.
11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000դրամ.
Տեղական վճարներ
1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 5000 դրամ.
2. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 10000 դրամ.
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար 5000 դրամ.
4.Համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար վճար սահմանվում է
1)կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 30 դրամ.

Համայնքի ղեկավար՝ Գ. Հայրապետյան